Պարույր Սևակ

Զղջում

Ճաշակած մայրական զգվանքի հետ կարոտիդ լեղին,
Մարմնական հանգստի հետ՝ հոգու խռովք,
Թույլ տուր այսօր, քույր իմ, դարձնել քեզ արնոտ կառափնատեղի,
Եվ ինձ մորթել այնտեղ մեղանչման ու զղջման անագորույն սրով...
Քանզի դու էիր միայն՝ հասկացար ապրումներս խելագար,
Անկումներս՝ թռիչքից առաջ, դժգոհ հայացքս՝ թռիչքից հետո.
Տեսար միտքս - գայլի պես անկուշտ, գայլի պես ագահ,
Լսեցիր տիրական ճախրանքը ոգուս, որ զարկվում է լոկ հանճարի նետով:
Քանզի դու էիր՝ անսարսուռ իջար հոգուս վիհերն ի վար,
Հոգուս անհունները - մռայլ, ահալի, անհատակ,
Ուր լպրծուն են ծերպերը, քարանձավներն - ամայի, քարափները - խավար,
Ուր պատահմամբ ընկածին կյանքս թվում էր անմիտ և երգս՝ անախորժ կատակ:
...Սակայն դու անհատակ վիհերից այդ ելնելով անելարան,
Երջանիկ և գոհ ժպիտով մի, որ հատուկ է գանձեր պեղող մարդուն,
Հասկացար, որ հրաշք էր կյանքս - անհունորեն հարուստ և գերառատ...
Տեսար այնտեղ արարիչներ - երկնող, արքաներ - անթագակիր և դևեր - մշտարթուն:
Ըմբոշխնեցիր ցավով՝ անդառնալի հաճույքի հետ միասին,
Քաղցր ու դառն շիճուկներն իմ՝ սրբագործված արյունիս մեջ,
Սերս հավերժորեն խոստումնալից և վայրկենապես խաբուսիկ,
Հոգիս, որպես հավերժ մատյան և մարմինս՝ նրան գրքակալ...
Չխնդացիր, երբ հիվանդ էի հոգով՝ առանց պատճառի և անցավ,

Չլքեցիր, երբ լքեցի քեզ - անգետ քո հոգուն, քո լույսին կույր,
Եվ խոստումի ու սիրո, և դրժման ու լքման մեջ ինձ հասկացար,
Կեղտով ապական հոգիս դիտելով՝ անբիծ ու մաքուր...
Եվ հիմա ես, անցած անվերադարձ ճանապարհի կեսից
Ետ նայելով, քույր իմ, ի՞նչ խոսքերով արդյոք արդարացում հայցեմ,
Ինչպե՞ս հասցրնեմ քեզ զղջման երգն այս իմ,
Երբ սերըս - սուրհանդակ՝ անհանգրվան անցել
Եվ իր հետ տարել է սրտիդ մերձենալու անկրկնելի հասցեն...

1942թ.